

Կ-535-29.03.2020-ԱԱ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասի 1-ին կետում «դեպքում» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 5.1-ին մասով նախատեսված դեպքերի» բառերը,

2) լրացնել 5.1 մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«5.1. Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) հաստատված ախտորոշմամբ անձի մահվան դեպքում ախտաբանաանատոմիական հերձումներ չեն իրականացվում»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես:

ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

**«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՆԱՆ**

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

2019թ. դեկտեմբեր ամսից սկսած Չինաստանում ի հայտ է եկել կորոնավիրուսի նոր տեսակով պայմանավորված վարակ, որի հետեւանքով ամբողջ աշխարհում առաջացել է համաճարակային լարված իրավիճակ: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը վարակի հետ կապված իրավիճակը դասակարգել է որպես «հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ» եւ հորդորել բոլոր երկրներին ձեռնարկել համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ՝ վարակի տարածմանը դիմակայելու համար:

Հայաստանի Հանրապետությունում գործող ախտաբանաանատոմիական ծառայություններ մատուցող կազմակերպությունները չունեն կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) հետեւանքով մահացած անձանց հերձում իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններ եւ չեն բավարարում դրա համար նախատեսված միջազգային պահանջներին: Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված հիվանդության վարակելիության աստիճանը դեռեւս ամբողջությամբ բացահայտված չէ, ինչը կարող է հերձման արդյունքում առաջացնել վարակի տարածման անդադրման հետեւանքներ, ինչպես նաեւ բացահայտված չէ դիակի մեջ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ապրելիության ժամանակահատվածը, անհրաժեշտ է, ըստ բժշկական փաստաթղթերի, կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) հետեւանքով անձի մահվան դեպքում չիրականացնել հերձում, ինչն էլ վկայում է «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու անհրաժեշտության մասին:

2. Կարգավորման նպատակը եւ բնույթը

«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվում է պարտադիր հերձում իրականացնելու

դեպքերից նախատեսել բացառություն կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) հետեւանքով անձի մահվան դեպքում՝ կանխելով հերձման արդյունքում վարակի հնարավոր տարածումը՝ ելնելով բնակչության կենսաանվտանգության ապահովման առաջնայնությունից:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները եւ անձինք

Նախագիծը մշակվել է Առողջապահության նախարարության իրավաբանական վարչության կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) հետեւանքով անձի մահվան դեպքում հերձում չի իրականացվի:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտների եւ ծախսերի, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների ծախսերի եւ եկամուտների վրա կունենա չեզոք ազդեցություն:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՄՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ օրենքներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանա:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասի 1-ին կետում «դեպքում» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 5.1-ին մասով նախատեսված դեպքերի» բառերը,

2) լրացնել 5.1 մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«5.1. Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ~~հետեւանքով~~ հաստատված ախտորոշմամբ անձի մահվան դեպքում ախտաբանաանատոմիական հերժույմներ չեն իրականացվում:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի (Կ-535-29.03.2020-ԱԱ-011/0) երկրորդ ընթերցմամբ քննարկման համար ներկայացված առաջարկների

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՋԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ Ի ՈՐՈՇՈՒՄԸ
Նարեկ Ջեյնալյան	«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ կետի «1)» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած՝ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդության հետևանքով անձի մահվան դեպքում, երբ բացակայում է կենդանության օրոք հաստատված ախտորոշումը կամ՝ եթե առկա է մահացածի ընտանիքի չափահաս անդամներից մեկի բողոքը: Սույն կետի իմաստով ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, օրինական ներկայացուցիչը, ամուսինը, ամուսնու ծնողները, որդեգրողը, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, այդ թվում՝ որդեգրվածը:»	Չի ընդունվել	Նախագիծը խմբագրվել է այլ բովանդակությամբ
ԲՀԿ խմբակցություն 20/20 որոշում	«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին նախագծի 5.1 մասում՝ <ul style="list-style-type: none"> «հետևանքով» բառը փոխարինել «ախտորոշմամբ» բառով և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «5.1 Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշմամբ անձի մահվան դեպքում ախտաբանաանատոմիական հերձումներ չեն իրականացվում»: Նախագծով ներկայացված փոփոխությամբ նախատեսվում է, որ ախտաբանաանատոմիական հերձումներ չեն իրականացվում, եթե անձը մահացել է	Ընդունվել է	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն

		<p>կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) <u>հետևանքով</u>: Այսինքն, ստացվում է մի իրավիճակ, երբ անձը կարող է կրել կորոնավիրուսային հիվանդության վարակ, սակայն մահանալ այլ հիվանդությունից և այս պարագայում նախագծի կարգավորումը վերջինիս վրա չի տարածվի: Մինչդեռ նախագծի տրամաբանությունն ակնհայտ է, որ այլ է՝ վարակի տարածման անդառնալի հետեւանքների կանխումն է:</p> <p>Ուստի և, նախագծի հիմնավորմամբ ներկայացված նպատակին հասնելու համար, անհրաժեշտ է հերժում իրականացնելու անթույլատրելիությունը տարածել ոչ միայն կորոնավիրուսային հիվանդության հետևանքով մահացած անձանց վրա, այլ այն անձանց, որոնք ունեցել են կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշում:</p>		
<p>ԲՀԿ խմբակցություն ն 21/20 որոշում</p>	<p>«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ</p>	<p>Հոդված 2. «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի 19.2.-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 8) կետով.</p> <p>«8) սույն օրենքով սահմանված կարգով արտակարգ իրավիճակներում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելիս իրենց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառվելու դեպքում ստանալու հատուցում լիազոր պետական մարմնի սահմանված կարգով»:</p> <p style="text-align: center;">Հիմնավորում</p> <p>Ներկա պահին ՀՀ-ում հաստատված արտակարգ իրավիճակով պայմանավորված՝ բուժաշխատողներն իրենց կյանքը և առողջությունը վտանգելով, իրենց մասնագիտական պարտքն են կատարում և գտնվում են առաջնագծում: Նման դեպքում անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով պետության կողմից բուժաշխատողներին հատուցում տրամադրելու երաշխիքների ամրագրումը:</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	<p>Լրացուցիչ քննարկման արդյունքում անդրադարձ կկատարվի առաջարկությանը:</p>